



ՀԱՆԴԵՍ ԿԻՍԱՄՍԵԱՅ

ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ



( Ա. ՏԱՐԻ )


1 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1900

(ԹԻԻ 18)



ԲՈՎ Ա. ՆԴԱԿՈՒԹԻԻՆ

Հայերէն լեզուն արատահմանի մէջ, երբեք Սրմնքէշխանեան . —  
Տճգոյն Սուրանը . — Գիտական արձագանգ (Բւլէ՞ Ժանւր-է . . . ), Յ.  
Ս. Փափազեան . — Բէմալ պէյի պառօխուր . — Գաղթականները (Լէդ), Ե.  
Սրմնքէշխանեան :



ՏՊԱՐԱՆ ԱՐԵՒԵԼԵԱՆ , ՕՆՆԻԿ ԲԱՐՍԵՂԵԱՆԻ

Վ. Ա. Ռ. Ն Ա.

Չ Ա Ի Ի Ղ

Կը հրատարակուի ամէն ամսոյ 1ին եւ 15ին

Բ Ա ժ Ն Ե Գ Ի Ն Ն Է

Պուլկարիոյ համար տարեկան 10 ֆր., վեցամսեայ 5 ֆրանք,  
Արտասահմանի » տարեկան 12 ֆր., վեցամսեայ 6 ֆրանք,  
Ամերիկայի » » 2 1/2 տոլար

“ՉԱԻԻՂ” ձեռքէ չի ծախուիր :

Բաժնեդին , նամակ , յօդուած , լրագիր և գիրք՝ պէտք է  
ուղղուին հետեւեալ հասցէին՝

RÉDACTION DE LA REVUE CHAVIGH  
PENSIONNAT ARMENIEN  
(Bulgarie) VARNA

Չհրատարակուած ձեռագիրները խմբագրութեան քով կը մնան :

Շտախդի մէջ յայտարարուելու համար խրկուած հրատարակութիւնները պէտք է երկու օրինակ ըլլան :

# Շ Ա Ի Ի Ղ

ՀԱՆԳԻՄ ԿԻՍԱՄՍԵԱՅ

ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ

Ա. Տարի

1 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1900

Թիւ 18

## ՀԱՅԵՐԷՆ ԼԵԶՈՒՆ

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ՄԷԶ



Արտասահմանի հայ մամուլին վրայ այս էջերուն մէջ համառօտ բայց ճշգրիտ տեսութիւն մը պարզուած տան, — տեսութիւն մը որ քանի մը կողերէ անհարկի դանդառնելու անդի տուաւ, — բնառ ու է ակնարկութիւն չէր եղած լեզուի այն ձեւին վրայ որով այդ մամուլը կը խմբագրուի առ հասարակ :

Մինչեւ 96 թուականը, ուր թրքահայ գրականութեան հեղինակաւոր ներկայացուցիչներուն գրելով է մեծագոյն մասը արտասահման փոխադրուեցաւ ազատութիւն ու անկաշխանգ մամուլի հիմնելու համար, աղիւ ու անխոնջ ճիգեր եղան հայ լեզուն զտելու, կտկելու, կանոնաւորելու ու աշխարհորարի վերջնական ձեւ մը կերտելու համար։ Արեւելիքի ու յետոյ մանաւանդ Հայրեն

նիք սրուն շարժը խմբուած էին նորոգ հայ աշխարհաբարին վարպետները — Բաշալեան, Կիւրճեան, Արփիար, Չօպանեան — այս նպատակին ծառայեցին սրանցիւ ու արդիւնաւոր յարատեւութեամբ մը։ Նորաստեղծ գեղեցիկ լեզուն, որով ամէնէն նոր գաղափարները կուգային ակնախառն լոյսով մը լուսաւորել ընթերցող հայութիւնը, իր ճառագայթումէն ցրացուց նոր սերունդ մը գրողներու, սրտիք ապագայ գրականութեան մը, աւելի հզօր ու աւելի հիմնական, խորիտխոր գաղափարաւոր յոյսը կը ներշնչէին։

Աւերբոյ է բնել որ մեծ ու աշխարհաւոր փոթորիկէն ի վեր, որ հայութիւնը ցնցեց իր օրրանին մէջ, սկսուած գեղեցիկ դարձը դրեթէ առժամեայ դադարի մը գաղափարաւորեցաւ, բոյնը տարադնամ էր։ Մինչեւ անոր վերականգնութիւնը, մեր լեզուն ու գրականութիւնը դանդաղաբայ պիտի քաղեն, զիպ ու ամօրէն ու անհատական ձեւնարկներու շնորհիւ միայն պահպա

ներով բարձրութեան այն աստիճանը որուն հասած էր :

Այժմ, Պոլիս գրականութիւն մը կայ դեռ : Թրքահայ գրեթէ բոլոր թերթերը կը խմբագրուին գեղեցկահիւս հայերէնով մը, նորահաս գրողներու ձեռքով : Թուրքիոյ մէջ, նոյն իսկ ամէնէն յետին անկիւնները, հայը կարծես պահանջկոտ է թերթի մը պաշտօն ու անթերի խմբագրութեանը : Գրաքննութեան ազեալ մինչև հոն առաջ չերթար որ արդիւն մամուլին լեզուականօրէն ուղիղ խմբագրուիլը : Պարսոյ մէջ, օրինակի համար, գէշ ու սրտալ հայերէնով հրատարակուած թերթ մը երկար կեանք չպիտի ունենար, ընդհանուր արհամարհանքի, հեղնութեան ու պարսուի ծանրութեան տակ ճնշուելով ու ջախջախուելով :

\* \* \*

Սակայն, պահ մը աչք ածենք արատահմանի հայ մամուլին լեզուական գրութեան վրայ : Մէկ կողմ՝ առնելով քանի մը թերթեր, ինչպէս Անահիտ, Նոր-Կեանք, Գրօշակ, Հանդէս-Անսօրեայ, Բանասէր, որոնք կը խմբագրուին հայ լեզուին ամէնէն հեղինակաւոր ներկայացուցիչներէն, ու ասոնցմէ յետոյ Հանաչաւուսն ու Շարժում, միւս բոլոր թերթերը լեզուական բարեւոյն մը կը ներկայացնեն . Ա-

մերիկոյի (\*), Եգիպտոսի ու Պուլկարիոյ թերթերը կարծես երգուրնցած են քանդու հայերէն լեզուն, աշխարհաբարը հրէշային համեմատութեանց հասցնելով, ամէն ճիգ թափելով որպէս զի հայերէն լեզուն, իր նոր կազմաւորութեանը մէջ, անարգուի, չարչարուի, բզիկ բզիկ ըլլայ :

Զարմանալի երեւոյթով մը, արատահմանի հայութեան այն մասը որ թերթ կը կարդայ (ու ստուարութիւ է այս մասը) ներողամիտ անտարբերութեամբ մը կը վերաբերի լեզուի այս վանդալներուն հանդէպ . կը կարդայ զանոնք, բայց գոնէ բողբոյս ձայն մը չի բարձրացնէր, նոյն իսկ մամուլի միջոցաւ, զրական մնաստակար ու անխորհուրդ այս գործունէութեան դէմ :

Այսօր արատահմանի մէջ հայ լեզուով խմբագրուած թերթեր կան, զորս չեմ ուզեր ճնշուանել հոս, որոնք իբր քուստուն տարիէ ի վեր առաջին անգամը ըլլալով լեզուական անկումի սխուր երեւոյթը կը պարզեն : Անոնք որ նախաձեռնութիւնը ունեցած են այդ թերթերը ըստ ընծայելու, բացարձակապէս անգիտացած են խումբագրէ մը պահանջուած տարրական բայց անհրաժեշտ արժանիքը .

(\* ) Վերջերս Հայերէն սկսած է քիչ շատ լաւ խմբագրուիլ :

հմտութիւնը այն լեզուին որով թերթը պիտի խմբագրուի : Էնթութագրութեամբ մը — որ հաւանօրէն լի ճշմարտութիւն է — կրնամ ըսել որ տիեզերական մամուլին մէջ միմիայն կարգ մը հայ թերթեր են որ այս սղբալի երեւոյթը առաջ կը բերեն : Ու է ազգի մէջ չեմ կարծեր որ կարելի ըլլայ գրտնել թերթ մը այդքան սղարմելիօրէն խմբագրուած , եթէ այդ ազգը արդէն լեզու մը ունի հայերէնի չափ կանոնաւոր ու յստակ :

Արատահմանի մէջ , ուր թերթ հրատարակելու անդը վտու կը մընայ չորս տարիէ ի վեր , արուեստին անտեղեակ և անհմուտ անձեր , թերեւս բարի ու ազնիւ նպատակներէ մղուած , ձեռնարկեցին թերթեր հրատարակելու , ամենեւին չը մտածելով որ կանոնաւոր աշխարհաբար մը անհրաժեշտ էր այդ բարի նպատակին գործադրութեանը համար :

Եւ որովհետեւ տիրող թահուր հին մէջ ընթերցող հասարակութիւնը ժամանակ ու սիրտ չունէր լեզուական բժարանդութիւններով ըզբազելու , այդ թերթերուն վարիչները , գործուած հակալեզուական ոճրին երբեք չանդրադառնալով , շարունակեցին ու գեռ կը շարունակեն այդ եղանակով հրատարակ նեանլ իրենց թերթերը , առանց ամենաուրաք արտունջի երկիւղ ունենալու :

\*  
\* \*

Որքանին աչքիս տալեւր ունիմ , ու կը թղթատեմ զայն . հրաշալի սպագրութիւն . արհեստին կատարելագործումը . հրատարակութեան նպատակը ամէն դրուատիքէ վեր :

Բայց . . . կարդալու կ'սկսիմ : Ի՛նչ լեզու , Ստուած իմ . չեմ կարծեր որ աշխարհաբարը այդքան անգլխօրէն խոշանգուած ըլլայ երբեք : Եւ մտածել որ անիկա խրմբագրուած է հայ զրականութեան այն վառարանին մէջ իսկ զոր Եւրոպան կը ճանչնայ հայ Ակադեմի անուան ներքեւ :

Աւերդ է ու է խորհրդածութիւն : Գործը աւելի քան պերճաբարբառ է :

Եւ անիկա տեսակ մը արդարացուցիչ փաստ կը դառնայ արատահմանի այն մամուլին ձեռքը , որ հայ լեզուն ամէն վայրկեան չարչարելու պաշտօնը ստանձնած է կարծեմ :

Երուանգ Արմախէսյանցեան



## ՏԺԳՈՅՆ ՍՈՒԼԹԱՆԸ

Մարտի աշխատակիցներէն Սթէֆան Լօզան տեսակցութիւն մը ունեցած է թուրք փախստական Օսման բաշայի հետ , որ Սուլթան Համիտի մասին քստմենելի պատկեր մը գծած է :

— Ըսէք ինծի թէ ի՞նչ է իր խենդութիւնը:

— Արեան խենդութիւնն է, բայց մանաւանդ վախի խենդութիւնն է: Կը սպաննէ մեհամուլի մը պէս, անխորհուրդի մը պէս, չսպաննուելու համար: Ամէն անգամ որ իր գործակալներէն մէկուն դառնակը մխրձի մարդկային փորի մը մէջ, աւելի լայն շունչ կառնէ, իր կասկածները նուազած կզգայ, կը վերկենդանանայ:

«Վախը իր քով այլանդակ, զարհուրելի է: Կ'աքցանէ իր ուղեղը ու սիրտը՝ գիշեր ցորեկ: Այն գաղափարը թէ կը գաւեն իր կեանքին գէմ սեւեռուն գաղափար մը, մտքի մոլորանք մը, խելագարի յաճախանք մընէ: Օր մը տեսայ զինքը որ բազմոցի մը վրայ կքած էր գիակի մը նման ճերմակ, աչքերը սեւեռաբիր, որովհետեւ իր պատուհանին առջեւէն, պարտէզին մէջ, պահապան մը անցած էր վազելով: Տեսած եմ որ անիկա ճաշի միջոցին ոտքի ելած է սարսափահար, գետին նետած է սեղանին վրայի սըրուակները, գահավիժօրէն պարտէզ վազած է, ամբողջովին բացած է բոլոր ծորակները, ժամ մը գիտած է անոնց վազելը, յետոյ ափովը խմած է քանի մը կաթիլ: Տեսած եմ իր գողալը իմ առջեւս եւ գրեթէ նուազելը, որովհետեւ զօրահանդէսի մը միջոցին քիչ մը շատ բուն կերպով ողջունած էի զինքը եւ աջ ձեռքս՝ զոր գլխարկիս տարած էի՝ շատ արագ կերպով ինկած էր գիտախ վրայ: Նոյն իսկ այդ օրուրնէ ետքն է որ մեր յարարութեան խենդ աւրուեցաւ: Տեսած եմ զինքը որ իր բըզուկներովը մարդու մը դանկը խորտակած է, որովհետեւ այդ մարդը իր անցնելու

պահուն գրպանին մէջ բան մը փրնտրուելու շարժումը ըրած էր — իրնդրագիր մը անշուշտ: Տեսած եմ զինքը որ 200 ոսկի վճարած է աւազակի մը դոր իր հրամանով ազատ արձակած էին որպէս զի անյայտ ընէ իր իտալացի նուագապետին աղջիկը: Ապտիւլ Համիտ կը վախնար անկէց, վառն զի մարդ մը ուսկից վախ ունէր՝ գլխէ հանած էր այդ իտալուհին: Զանիկա սպանող աւազակը ետթաղանը անոր փորէն խոթելով կոկորդէն դուրս հանեց:

«Պետութեան հասոյթներուն կէսը կը վասնէ լրտեսներու վարձքին: Տարուէ տարի միլիոններ կը ծախսէ միմիայն իր խոհանոցին համար: Ֆրանսացի խոհարար մը ունի որ իր ամէն մէկ պնակը կը գնէ պողպատէ արկղի մը մէջ, կղպուած ու մոմով կնքուած: Ասոր բանալին միայն Սուլթանը ունի, եւ ամէն անգամ երկար բարակ կը քննէ մոմէ կնիքը՝ մնաուկը բանալի եւ անոր պարունակութիւնը ուտելէ առաջ: Հակառակ այս նախզուշտութեան, տասնըհինգ հոգինոց ջոկատ մը կը պահէ գիշեր ցորեկ լրտեսելու համար խոհարարը. նոյնքան թուով ուրիշ ջոկատ մը՝ առաջինին վրայ հսկելու համար, եւ երրորդ մըն ալ՝ ապահովուելու համար որ միւս երկու ջոկատները իրարու հետ չեն համաձայնիր:

«Ոստիկանական ամէնէն ապուշ տեղեկագիրները վարկ ունին այս խեղճ տկարացած ուղեղին մօտ, ու ոսկիի ծանրութեամբ կը վճարէ ամէնէն այլանդակ ստութիւնները:

«Երեք ամիս առաջ, լրտես մը կաւ ընել իրեն թէ քիւրտերը ծրագրած էին ստորերկրեայ ճամբայ մը

փորել Ղալաթիաէն մինչև Երլորդ՝  
զայն օղը հանելու համար: Ասիկա  
Կալէէն Տուվը փապուղի մը պեղելու  
պէս բան մընէ. գրեթէ սասն հազար  
գործաւոր հինգ տարի աշխատելով չը  
պիտի կրնային զլուխ հանել:

« — Այս մարդը լաւ ծառայեց ին-  
ծի, ըստ Աուլթանը, տասն հազար Քր.  
սուէք իրեն, տիրոջս մը եւ պատուա-  
նշան մը:

« Վախը ամէն ոճիր եւ ամէն ան-  
գթութիւն գործել կուտայ իրեն: Իր  
չէրքէզ ազախիններուն մէկէն փոքր  
ազջիկ մը ունեցած էր որուն սէր կա-  
պած էր: Մանկուհին որ վեց տարե-  
կան էր, շատ անգամ անոր քովը  
կերթար խաղալու համար. օր մը Հա-  
միտ նստած էր իր թիկնաթոռին վը-  
րայ, բըլովէրը քովը դրուած, եւ  
տղեկը պատկերներ կը գրաէր անկիւն  
մը: Սուլթանը ստքի կելլայ եւ դարան  
մը կերթայ: Տղեկը կը մօտենայ թիկ-  
նաթոռին ուր կը գտնուէր հրազէնը:

« Ապտիւլ Համիտ անմիջապէս վա-  
խով կը համակուի:

« — Սպանն'ը կուզես զիս, կազազակէ:

« Կաննէ մօտը կեցած դաւազան մը  
եւ այդ վեցամեայ փափկակազմ ման-  
կուհին կսկսի հարուածել, մինչև որ  
անոր մարմինը արիւնլուայ կը ջախ-  
ջախուի: Յետոյ, որովհետեւ տղեկը  
զեռ կը չնչէր, տանել կուտայ քովէն  
ու կը հրամայէ Չէրքէզիստանի էն  
հեռաւոր անկիւնը զրկել զայն:

« Փոքր ազջիկը բարեկամութեամբ  
կապուած էր իր մէկ եղբոր՝ Սէլիմ  
էֆէնտիի հետ, Սուլթանին զաւակը:  
Այն ասեռէն ի վեր, բնաւ չուզեր  
տեսնել իր որդին եւ երբոր պաշտօնին  
նրբանցքներուն մէջ անոր հանդիպի՝

— Աստուած հոգիդ առնէր որ ա-  
զատէի քու ներկայութենէդ, կրտէ: »

Հոս, Օսման բաշա լոնց պահ մը,  
ինծի թուեցաւ թէ այնքան անաւոր  
ու արիւնալից յիշատակներու պատ-  
մուածքէն իր գինուարի խիստ ձայնը  
այլայլած էր, ու այդ հսկային նայ-  
ուածքին մէջ եղերակուն գուլթի չես  
գիտեր ինչ լոյս մը կը վառէր:

Կաշեց գլանիկը եւ յետոյ նայեցաւ  
անոր օղասփիւռ կապոյտ գուլաներուն  
ու յարեց.

— « Ինծի հարցուցիք թէ ի՞նչ էք  
Ապտիւլ Համիտի խենդութիւնը. պա-  
տասխանեցի: Ձեր հայրենակիցները  
ածականի սխալ մը կը գործեն: Այս  
մարդուն ձեռքերը եւ մինչև իսկ դէմ-  
քը արատող կարմիրը լոկ կը ծառա-  
յէ ծածկելու իր գոյնին դիտկնային  
տժգոհութիւնը: Կարմիր Սուլթան  
անուանելու չէ՛ գինքը, այլ տժգո՛յն  
Սուլթան... »

\* \* \*

Նոյն թերթին Լոնտոնի թղթակի-  
ցը հետեւեալ շանկան թղթակցու-  
թիւնը կը հաղորդէ.

« Կերեւայ թէ Օսմ. կայսրութիւնը  
այնպէս զգուելի բնակավայր մը եղած  
է, կերեւայ թէ վեհապետին կողմէ ի  
գործ դրուած բռնակալութիւնը այն-  
քան ատելի դարձած է որ հոն, արեւ-  
ւելքի մէջ, ով որ կը մտածէ ու կը  
խորհի, ով որ նայուածքը դարձու-  
ցած է դէպ ի քաղաքակրթութիւն,  
այլ եւս չուզեր մեղաւորից ու խաղալի  
զառնալ: Օսմ. կայսրութիւնը կամա-  
ցուկ կամացուկ կը պարպուի եւ ճար-  
ճատիւններ կը լուին, մտալուս  
քայքայումը նախազգացնելով:

« Անցեալները Սուլթանին քեռայրն  
իսկ Մահմուտ բաշան էր որ կը խա-  
բէր Սուլթանին հսկողութիւնը, խոյն

կուտար երկու զաւկներուն հետ օտար նաւով մը եւ կը ջանար հեռուն երթալ պարզել յառաջգիմութեան եւ բարենորոգման գաղափարներ: Երէկ, Իսմայիլ Քէմալ պէյն էր, որ Թուրքիոյ մէջ ամէնէն բարձր դիրքին հասած էր, որուն համար Կրէտէի կառավարչութեան խօսք եղած էր եւ որ, թափած ջանքերէն խոնջ, այնքան պայքարէ ու հալածանքէ սրտնեղ, Պրուսէլ կը հաստատուէր ուր այս պահուս աղմկալից պոռչիւս մը կը պատրաստէ:

«Վերջապէս այսօր Օսման բաշան է որ, Օսմ. բանակին մէջ կիսաբաժնի զօրավար, որդի եւ ուղղակի ժառանգ Գիւրտիստանի էմիրին, գաղտնապէս խոյս առած է Թուրքիայէն եւ այժմ Լանսոն կը գտնուի:

«Մահմուտ բաշա իշխան էր, Իսմայիլ-Քէմալ քաղաքագէտ. Օսման զինուոր մըն է, հետեւապէս ոչ գրչով ոչ խօսքով է որ կուզէ Թուրքիան խալըսել լուծէ մը որ կանապատուէ զայն, այլ սուրով:

«Այսօր Լոնսոն հանդիպեցայ իրեն: Իր ցուրտ ու յամբ ձայնովը անիկա մէկ ժամ ինծի պարզեց իր ցաւերը, եւ մանկունակ ժպտով այդ հսկային թողած տպաւորութեան տակ կը զըտնուիմ դեռ. անիկա իր էն հանդարտ ձայնովը կ'ըսէր.

— Հաւանական է որ իմ ընկերք փորձիս մէջ գլուխս վրայ տամ. բայց անիկա այնքան ամուր կերպով փակած է ուսերուս որ ուրիշէ մը աւելի դիւրութեամբ կրնամ վտանգի դնել զայն:

Նախ իր պատմութիւնը կը պատմէ ինծի: Կը խօսի իր հօրը Քիւրախտանի էմիր Պետրըխան էլ Հալիտի վրայ, որուն անունը առաւօպելական դար-

ձած է Կովկասէն մինչեւ Կարմիր ծով եւ որ կէս դար կառուցաւ թէ՛ Պարսկաստանի թէ՛ Թուրքիոյ դէմ:

Հարագատ արիւնը չի կրնար ստել: Հազիւ երիտասարդ, անիկա իր անձնական ծախքովը կը կազմակերպէր ու կը զինէր 5000 քիւրտ որոնցմով արիւարար կը կոուէր Ռուսիոյ դէմ՝ Թուրքերուն քովն ի վեր: Բայց իր բուն թշնամիները՝ ան ատենուան գաշնակիցներն էին: Սան-Սթեֆանոյի գաշնագիրը հազիւ կնքուած, ինք ոտքի կը հանէր Քիւրախտանը եւ տարիներով իր լեռներուն մէջ կը հարուածէր Սուլթանին լէզէոնները:

Սակայն Ապտիւլ-Համիտ խորամանկութեան գանձեր կը թափէ յաջողելու համար հոն ուր բունի ուժը ապարդիւն կը մնար: Օսմանին կը դրկէ Շէյխ Էպիւլ-Միւտան, ան որ այժմ գրեթէ անահման ազգեցուծիւն ունի Նըլլաղի մէջ. նոյն խակ Օսմանի ընտանիքին վրայ ազգեցուծիւն կը բանեցնէ եւ կը պարտաւորէ զայն պայմանադրուելու:

Հարկ է ըսել թէ Ապտիւլ-Համիտ երբէք չյարգեց յանձնառութիւնները որոնց տակ իր ստորագրութիւնը դրած էր:

Եւ այն ատեն, անցեալ տարի, Պայքամի աճներուն, եզական սուսաբան մը պարզուեցաւ: Մինչ Ապտիւլ-Համիտ, գահին վրայ նստած, իր կայսրութեան ամէնէն բարձր անձնաւորութեանց եւ տէրութեանց ներկայացուցիչներուն մեծարանքը կընդունէր, Օսման մտաւ գահոյից սրահը եւ ի նշան ըմբոստութեան գետինը Սուլթանին ոտքերուն տակ նետեց իր վերարկուն եւ իր պատուանշանները:

Նոյն պահուն իսկ պահակները ձերբակալեցին զինքը: Ութ օր ետքը Սեւանիկ արտորուած էր. բայց քանի մը շաբաթ առաջ, իր կիսաբաժնի զօրավարի համազգեստը հագած, Համիտի ոստիկաններուն եւ լրտեսներուն քթին տակը, ցորեկ ատեն նաւակ մը նստաւ ու մօտեցաւ Փրանսական նաւու մը որ շոգիի վրայ կեցած էր Սեւանիկի նաւահանգստին բերանը եւ հոն մտաւ առանց որ օսմ. իշխանութիւնը, ակիբերան, ժամանակ ունենար միջամտելու:

Ահա թէ ի՞նչ ըրած է Օսման բաշա խնցեալին մէջ. հիմակ անիկա պիտի ըսէ՝ հանդարտ ձայնով մը, բայց անդրդուելի հաստատամտութեամբ մը, ինչ որ մտադիր է ընել յառաջիկային.

« Հոս անցորդ մըն եմ միայն: Եզանակը ներելուն պէս, ինծի ծանօթ ձամբով մը եւ կուսակիցներու հետ զօրս ունիմ ոչ միայն Եւրոպայի, այլ եւ Եգիպտոսի մէջ, Քիւրտիստան պիտի երթամ: Բովանդակ ժողովուրդս ինծի կըսպասէ ու ես ձեռք ձեռքի ու համաձայնութեամբ կընթանամ ամբողջ հայ ժողովրդեան հետ: Քիւրտ եւ հայ, զաղանապէս զինուած այս պահուս, իմ հասնելուս միայն կըսպասեն ոտքի ելլալու համար մէկ մարդու մը պէս ու թուրքերոյ զէմ մղելու համար ցմահ կռիւ մը, հաւանականաբար ամէնէն անեղ կռիւներէն մէկը որուն զէմ գնելու ստիպուած ըլլայ օսմ. կայսրութիւնը:

« Չկարծէք որ յիմար մը կամ երազող մըն եմ: Երբէք չեմ երազեր խորտակել կապերը որոնք Քիւրտիստանն ու Հայաստանը կը կապեն թուրքերոյ. ես կուզեմ Քիւրտիստանը ազատել անիշխանական եւ ընկերա-

յին ապականութեան վիճակէն ուր զինքը միւրձած է թուրքերոյ անպատուող լուծը, որ այդ պատերազմիկ ժողովուրդը բռնակալութեան եւ աւերման գործիք մը ըրաւ եւ որ դեթէ արտաքսեց զայն քաղաքակիրթ ազգերու կարգէն:

« Ես կուզեմ քիւրտ ազգին վրայ ունեցած անհերքելի ազդեցութեամբս փոքրային բարեկարգութիւնը, ապահովութիւնը եւ պրժանապատուութիւնը վերահաստատել: Վան, Տիարպէքիւր, Պիթլիս, Էրզրում, բոլոր քաղաքները, բոլոր բազմամարդ կեդրոնները, նոյն իսկ գեղերու բոլոր բնակիչները իմ ժամանմանս կ'սպասեն: Չանագան տեղերու մէջ զէնքեր պահուած են եւ Քիւրտիստան մտնալուս պէս՝ 100,000 հոգիոց բանակ մը պատրաստ պիտի ունենամ ինծի հետեւող: »

Այս բաները ըսուեցան անանկ ցուրտ հաստատամտութեամբ մը, անանկ կորովալի շեշտով մը որ անկարելի էր պոռոտախօսութեան հետքն իսկ նշմարել: Այս մարդը այնքան վստահ կերեւայ ինքզինքին ու իր անձին վրայ որ կզգաս թէ ըսածը պիտի ընէ: Սակայն եւ այնպէս կը մղուիմ գիտել տալ իրեն որ գուցէ վստանգաւոր ըլլար այդպէս առաջուց տարածայնել իր որոշումները:

« Ոչ, կըսէ, որովհետեւ չիկայ զօրութիւն մը որ կարենայ արգիլել զիս ոտք կոխելէ Քիւրտիստանի հողին վրայ, եւ չիկայ զօրութիւն մը որ այն օրը յորում ոտք գնեմ այդ հողին վրայ, կարենայ արգիլել իմ ծրագիրներուս գործադրութիւնը: Կուզեմ բարձրաձայն ըսել ինչ որ որոշած եմ: Ժողովուրդս ինծի կուսպէ եւ ես կուզեմ որ անիկա գիտնայ թէ

իրեն կերթամ: Հզօր ժողովուրդ մըն է որուն կորովի պետ մը միայն կը պակսի՝ իր դիրքը վերստանալու արժանի ցոյց տալու համար ինքզինքը՝ ատակ երեւնալով հնազանդելու օրէնքի եւ յարգել տալու իր ձեռք բերած ազատութիւնը: Իմ ժողովուրդս գիտէ թէ ես արժանի եմ հօրս զաւակը ըլլալու: Ես ալ իմ կողմէս գիտեմ՝ թէ ժողովուրդս արժանի է իրեն գլուխ ունենալու մէկը որ մտադրած է ամէն բան զոհել՝ իրեն վերադարձնելու համար արդարութիւնը, որուն իրաւունք ունի:»



ԳԻՏԱԿԱ ԱՐՁԱԳԱՆԳ

ԻՆՉՊԷ՛Ս ՔՆԱՆԱԼՈՒ Է . . .

Առանց բարձի, կըսէ Տօքթօր Ֆէրէ:

Չարմանալու բան չկայ. գիտուն մըն է որ մեզի այս յարգօրը կուտայ բնախօսական երկար ճառի մը մէջ բացատրելով թէ բարձով և առանց բարձի քնանալուն մէջ ո՛րքան մեծ տարբերութիւն կայ և վերջինը առաջինէն ո՛րքան անհամեմատ կերպով առողջապահական է, մինչ ինքք գուցէ փոխանակ առաջիններէն ըլլալը հետեւող իր վարդապետութեան, ընդհակառակը պատուիրած

է որ բարձ մը աւելի գնեն անկողնին վրայ, որպէս զի գիշերը հանգիստ անցընէ:

Արդէն ո՛ր գիտունն է որ կը հետեւի առողջապահական պատուէրներուն և կը պահէ անոր է՛ն տարրական պայմանները որպէս զի մենք ալ ստիպուած ըլլանք անոնց ամէն մէկ խօսքերը իբր պատգամ՝ ընդունիլ և կէս առ կէս գործող ըլլալ:

Ժողովուրդին վստահութիւնը ա՛յն օրէն արդէն խախտած է գիտուններուն վրայ երբ տեսած է թէ անոնք մէկ կողմանէ ոգելից ըմպելի գործածելը կարգիլեն և միւս կողմանէ գիշերը հիւանդի մը քով կանչուած ժամանակինն բացարձակապէս քակառ կը հօտին, ինչպէս կըսեն. և կամ չծիւել կը յանձնարարեն ու կը տեսնուի որ մատուրներնին ծխախտէն գեղինցած են:

Ուրեմն ազատ է ժողովուրդը իր գործին եկածը մտիկ ընելու և գործին չեկածին վրայ ծիծաղելու. բայց այս նկատողութիւնները պատճառ մը չեն անշուշտ որ գիտական քրտնիկագիր մը զանց առնէ ծանօթացնելու իր ընթերցողներուն ինչ որ կայ իբր նորութիւն գիտական աշխարհին մէջ և ի՛նչ պատուէրներ որ կը տրուին յանուն առողջապահութեան:

Արդ, Տօքթօր Ֆէրէ՝ Փրոնստական առողջապահական ընկերութեան վերջին նիստերէն մէկուն մէջ կը հաղորդէ թէ երկար փորձերէ վերջ

— անշուշտ ո՛չ անձնական, ինչպէս կըլլայ միշտ — հաստատած է որ մարդը աւելի շատ կօղտուի քունի բարերար ազդեցութենէն եթէ աւսանց բարձի, կատարելապէս հարիզոնական ձեւով քնանայ:

Տօքթօս Ֆերէ՛ թշնամի մը չէ անկողնոյ կազմածք ծախողներուն և ոչ ալ խնայողական միջոցներ ցոյց տալու յաւակնութիւնը ունի. ո՛չ, այլ կըսէ թէ բարձը մարդուն դըլուխը իր բնական դրութենէն շեղեցընելով վզին հետ այնպիսի անկիւն մը կը ձեւացնէ որ արիւնը չկրնար ազատօրէն շրջիլ երակներուն և դործարաններուն մէջ, վզին շիղեքը կը յոգնի իրենց սովորական վիճակէն զրկուելով երբ առաւել կամ նուազ ձգտուին կամ սեղմուին, թոքը ուղածին պէս չկրնար բացուիլ գոցուիլ կուրծքին տակ և սրտին զարկերը անկանոն գործունէութեան մը կենթարկուին . . . :

Ուրեմն պատարագմը հրատարակուած է բարձերուն դէմ. բարձի կուի մը՝ որ երբէք չնմանիր մեր մանկութեան ժամանակ մզած կըւսիւին :

Թէ ի՞նչ կը պատահի քունի տեն և թէ ի՞նչ է քունը : Պէտք է գիտնալ ասոնք, որպէս զի կարենանք եզրակացութեան մը յանգիլ :

Երբ մարդ քնանալ կըսկսի, կը տեսնուի որ ֆիզիքական ու մտաւորական կարողութիւնները կը պակ-

սին, դործարանական աշխատութիւնները կը դանդաղին, յարաբերական կեանքի պաշտօնները կը կասին, սիրաը իր զարկերը կը թուլցնէ, շնչառութիւնը կը տկարանայ և բազկերակը հանդարտ հանդարտ իր ներկայութիւնը միայն կը զգացնէ, որպէս թէ ամբողջ մարմինը սէնսֆօքի մը մէջ եղած ըլլար :

Այս միջոցին է որ քունի հինգ ժամանակամիջոցները իրարու կը յաջորդեն, որոնց առաջինն է՝ քնանալու բաղձանքը . Բ. քունի սկզբնաւորութիւնը որ ժամը 11էն մինչև մէկ կը տեւէ . Գ. բուն քունը, այսինքն ծանր քունը որ կըսկսի 1էն մինչև 3 . Գ. հետզհետէ պակասող քունը որ 3էն մինչև 7ը կը տեւէ և Ե. արթննալու տենչը որուն կը յաջորդէ կոտարեալ զարթնու մը :

Փոքրիկ աղաքներ երկրորդ ժամանակամիջոցին է որ ընդօստ զարթնումներ կունենան ու սրտէն կամ սաամոքսէն նեղւողները երրորդին մէջն է որ զաւտնցանքներով կը տապալակին :

Մտային աշխատութիւն ունեցողները աւելի պէտքը կը զգան քունին քան միայն ֆիզիքապէս աշխատողները, այս պատճառաւ է որ գիւղացին քաղաքացիէն աւելի կը քնանայ. սկալոնները, աղաքները և կիւները աւելի շատ կը սիրեն քունը քան հաստատակազմ անձերը .

միայն ծերերն են որ անկանոն կերպով կը քնանան :

Հալլէր ըսած է թէ քունը՝ ուղեղին մէջ շատ արիւն խոնուելուն արգիւնքն է : Իսկ Համնտ ճիշտ հակառակը՝ ուղեղին ժամանակաւոր անարիւնութեան մէկ ապացոյցը կը կարծէ . առոնց և ոչ մին վերջնականապէս ընդունուած է . քանի որ լաւ քնացողներէն ոմանց ուղեղին մէջ արեան խոնում անոնուած է և ոմանց ալ՝ անարիւնութիւն . միայն Բրէյէր է որ Չլային գրութեան մէկ վիճակին կը վերագրէ քունը , ինչ որ ամէնէն հաւանականը ենթադրուած և ընդունուած է :

Եթէ Հալլէրի և Համնտի կարծիքները կասկածի ներքեւ մնացած են ու Բրէյէրինն է որ կը տիրէ , այն ատեն քնանալու է ինչպէս որ կուզուի . բայց երբ որ մը Հալլէրի հետեւողները ընդունել ատն իրենց թէզը , այն ժամանակ մէկիկ մէկիկ նետեցէք բարձերնիզ և գլուխնիզ կախ հանդարտիկ մը քնացէք . իսկ եթէ Համնտեանները յայլժական ելլեն . . . գրաւ կը դնեմ որ այն ատեն բարձերուն գինը պիտի բարձրանայ :

Ուրեմն , մինչեւ ցնոր տնօրինութիւն , քնացէք ինչպէս որ հանգիստ կընէք և քանի բարձով որ կընաք . քնացէք մանաւանդ սո՛վ կողմերնու գլրայ որ սրտերնիզ ստամոքսէն չը ճնշուի . միայն զգուշացէք որ կրունակի վրայ պօռկելով երազելու

չստիպուիք : Գէշ բան է սա երազը , մանաւանդ ցորեկ ատեն , ստքի վրայ երազելը . . . :

Յ. Ս. ՓԱՓԱՋԵԱՆ



## ՔԵՄԱԼ ՊԵՅԻ ՊՈՒՈՅԻՈՐ

Ծանօթ թուրք փոխտտական իսմայիլ Գէմալ պէյ Պրուսէլ հրատարակած է գրքոյկ մը , որուն ներածման մէջ կը բացատրէ այն պատճառները որոնք ստիպեցին զինքը բաժնուիլ Սուլթանէն : Հոս կ'արտատպենք անոր կարեւոր մասերը .

« Չեմ ամբաստաներ , կը պատմեմ . չեմ բողոքեր , ինքզինքս կարգարացնեմ . ինքնակենսագրութիւն մը չէ ըրածս , կամուոր արտօրիս պատճառները կը բացատրեմ :

« Կայս . կառավարութեան ծառայութեանը մտած գեռ երկատարդ , և այնպիսի վայրկենի մը ուր մեր ամենէն մեծ պետական մարդիկը կը ձեռնարկէին իրենց լայն ու բարենորոգիչ հայեացքները դարձադել , ես դժբախտութիւնս ունեցայ անոնցմէ ետքը ապրողներէն մէկը ըլլալու կամ մանաւանդ աչաւ կերակուելու իրենց դպրոցին , որ յե-

ղակարծօրէն ու կանխահասօրէն փակուեցաւ :

« Երբ անհետացաւ Թուրքիոյ բարենորոգիչներուն վերջինն ու աւ մինէն քովասիրար, զո՞նք երթալով անտկնկալ ու անանուն հակազգեցութեան մը, իմ ճակատագիրս ալ սրտուեցաւ : Ֆշուելով տարուելով յորձանքէն որ ալեց ամէն ինչ որ կանգուն կը մնար մեր զինուորական ու քաղաքական հաստատութիւններէն, և եօթը տարի հետո մնալով մայրաքաղաքէն՝ քաղաքական փոթորիկներու մէջ այնքան յաճախակալ հասանքի մը ազդեցութեանը տակ, հոն դարձայ վերջապէս ու յանկարծ դիմոցս տեսայ Սուլթան Ապաիւլ-Համիտ վեհապետըս ու աէրս՝ զոր կը շարունակէի յարգել հակառակ այն դժբախտութեանց զորս երկիրը կրած էր իր աղէտալի հակազգեցութեան հետեւանօք : դէպքերը բան մը չէին փոխած հաւատարմական զգացումներէն զորս, սկզբամբ, տամած էի իր մեծանուն նախորդներուն համար :

« Իմ ուղղամտութիւնս ամէն տան ինծի սա համոզումը ներշնչած էր թէ մերիին պէս կայսրութեան մը փրկութիւնը կախում ունէր քաղաքականութենէ մը որ իբրեւ հիմունքներս դահին ամրապնդումը և բրէսլիսի բարձրացումը վեհապետին միակ կարող անձը իբրեւ միութեան գլխիմ ծուայերու ընդ մէջ այն-

քան բազմազան տարբերու և կառավարութեան մէջ միութիւնը հաշտեցնելու վարչական պէտպիսութեան հետ :

« Բարոյական ու քաղաքական հայեցակէտերէ քաղած այս կարծիքովս այնքան տագնաւած էի որ չէի վարանած մերժել գողափարը զոր յղացած էին հանգուցեալ Սուլթան-Ազիզի նախարարները, սրտնց հետ կապում էի ամէն տեսակ կապերով, այն է տապալել Սուլթանը . և 1875ին Լոնտոն գանուելով Ֆօռէն Օֆիսի մէջ ըրա Տէրպիի հետ տեսակցութենէ մը օգտուեցայ անգլիական կառավարութեան ուշադրութիւնը հրաւիրելու համար յիշեալ Սուլթանին գահընկեցութեան առաջին առնելու հարկաւորութեան վրայ, բացատրելով Ն. Բարձրութեան թէ Անգլիա միայն բաւական հեղինակութիւն ունէր այնպէս մը ընելու որ Ապաիւլ-Ազիզ ետ կենար այն ճամբէն որ վճռակամօրէն իր անկումը առաջ պիտի բերէր :

« Այն տեսնուան նախարարութեան ողջ մնացած անդամները ուրոնք, ինչպէս որ հաւաստեց ըրա Տէրպի, պիտի տեղեկացած ըլլային իմ գիտողութիւններուս, անշուշտ կը յիշեն զանոնք՝ հաստատելու համար ըստմներուս ճշմարտութիւնը :

« Պաշտօնի անցնելէս ի վեր կըրցածիս չափ ու պետութեան ու վեհապետի ծառայի պարտականու-

թեանս մէջ բաղձալի հաւտարմութեամբ վարուեցայ :

« Որքան տանն որ կրցայ խօսիլ Սուրբանին , առանց սքօշելու ըսի , իրեն բոլոր ճշմարտութիւնը երկրին սլքայի կացութեան վրայ . չժած կեցի իրմէ ոչ մէկը այն պատճառներուն սրտնցմով վերջնական օգէտը անխուսափելի պիտի գառնար և կարծուածէն աւելի շատ վրայ պիտի հասնէր , եթէ Ն. Վեհափառութիւնը առանց ժամանակ կորսընցներու , առանց դարձուածքի , ուզէր ուրիշ օղորութիւն մը տալ թուրքիոյ ներքին և արտաքին քաղաքականութեան : Քանիցս կրկնած եմ իրեն թէ մերինին պէս կայսրութիւն մը որ իր աշխարհագրական գերքով իր ժողովրդոց պատմութեամբն ու ծագումովը այնքան մատեն կը շոշափէր քաղաքակրթութեան շահեցը , օտմ. Սուրբաններու մակհանին տակ կրնար ապրիլ այն միակ պայմանով որ բարեկարգուէր և օժտուէր այնպիսի հաստատութիւններով որ կարենային գոհացընել իր հպատակներուն պէտքերն ու ձգտումները և սրտնք կատարեալ ներդաշնակութեան մէջ դնէին Եւրոպայի քաղաքակրթութեամբ պետութիւններուն հետ , սրտնց մտոր կը կազմէ :

« Իմ տեսութիւններս , պարզեւրով բոլոր քաջութեամբն ու կորու վովը զորս ինծի կը թեւագրէին հայրենասիրութիւնս և նիւթին

ծանրութիւնը , կը ներդարծէին նոյն իսկ պարտաւ ամէնէն յունդուզն գործակալներուն վրայ . անձիս դէմ ու է ակներև արարքի չէին գիմեր , սակայն և այնպէս քաղին տակէն ամէնէն դարչելի դաւերը կը նիւթուէին ինծի դէմ : Կը անտնայի որ գիրքս վտանգուած էր , և սակայն բուն գոհունակութիւնը ունէի քիչ շատ նպատաւով ըլլալու գաղափարներու նոր հասանքի մը կազմութեանը : Այնտեք իսկ որ առաջ չէին համարձակեր « բարենորոգութիւն » բառն արտասանել , գաւաղ իր նկատուելու վտիտով , կսկսէին բարձրաձայն խօսիլ վարչական բարենորոգումներու բացարձակ հարկաւորութեան վրայ :

« Այս ճշմարտութիւնը եղի արտաւ մը պէս տարածուած էր թուրքիոյ բոլոր ժողով գային խաւերուն վրայ , երբ թրանսվալի պազաւրաղ մը ծագեցաւ և թագուհւոյն բանակին առաջին ձախալուածները առաջ բերին իրացուցիչ խոնդալաութիւն մը պօէրներուն համար և ամէնէն բուն քննադատութիւնները Անգլիոյ դէմ Եւրոպայի քաղաքակրթ ազգերուն կողմէ :

« Այդ միջոցին պատրաստած էի փոքր հեղինակութիւն մը որ կը պարունակէր թրանսվալի խնդրին պատմութիւնը և ուր հաստատութեան բացայայտած էր ընդ հանրապէս իսլամներ , ուն ու մտանաւորապէս օսմանցինն բուն զգացումները հանդէպ

անգլիացւոց . զանիկա կարգացի  
քանի մը օրագրողներու , որոնք  
պատեհ գատեցին իսլամ պատուի-  
րակութիւն մը կազմակերպել եր-  
թարու համար Պոլսոյ անգլիական  
գեապանին և օսմ . ժողովրդեան  
կողմէ ներկայացնել ուղերձ մը հա-  
մակրութեան ու անխփփիս երախ-  
տագիտութեան զոր թուրքերը կը  
տածեն Անգլիոյ մտտին Արեւելքի  
քաղաքակրթութեան իր մատուցած  
ծառայութիւններուն համար :


« Այս ցոյցը նշանը ելաւ թրքա-  
կան համակրութեանց միանուագ  
արտայայտութեան , միեւնոյն ժա-  
մանակ բարձր շրջանակներու մէջ  
իրարանցում առաջ բերաւ :

« Ի յարգանս Սուլթանին և  
անձնական արժանապատուութեանս  
համար . նախամեծար կը սեպեմ  
բան մը չըսել իմ և Սուլթանին մի-  
ջև անցածին վրայ , այն շարժման  
առթիւ որուն սկզբնապատճառն  
ու կազմակերպիչը կը նկատէր զիս :

« Արդէն յայտնի է ինչ որ պա-  
տահեցաւ . պատուիրակութեան ա-  
մենէն աչքի զարնող անդամները  
մեծ մասամբ աքսորուեցան , իմ  
պաշտօնական զիրքս անասնելի  
գարձաւ : Քանի մը ամիս ետքը  
Թրիքոյի կուսակալ անուանեցայ  
արտաստօլոր թոշակով ու իշխանու-  
թեամբ : Ի գին հեռացմանս , պա-  
տիւներ ու վարձատրութիւններ շը-  
նորհուեցան ինձի : Չէի կրնար  
գանդաս . յայտնել եթէ միայն անձ .


նական շահունկատի առնէի . բայց իբ-  
րեւ հայրենասէր՝ սա երկասյրի դը-  
րութեան մէջ կը գտնուէի . իմ նոր  
պաշտօնատեղիս երթայի աստիճան-  
ներու և վարձատրութեանց ծանրու-  
թեան տակ խղզուելու համար կամ  
ինքնակամ աքսորուէի իբրև ազատ  
մարդ ապրելու համար :

« Այս վերջին որոշման յանգեցայ  
և հրաժարականս ու պատճառներս  
յարգանօք ներկայացնելէ յետոյ  
Սուլթանին , աքսորի ճամբան բըռ-  
նեցի , ու վեց ամսէ ի վեր , արտա-  
սահմանի մէջ , երանաւէտօրէն կը  
չնչեմ ազատութեան օգը , յար-  
գանքս պահելով հանդերձ վեհա-  
պետիս նկատմամբ և երկրիս հա-  
մար տածած սիրոյս մէջ իսկ գտնա-  
լով մխիթարութիւն մը անկից հե-  
ռացած ըլլալուս : »



## ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԸ

( Ա Խ Պ )



Ղուկաս աղա , շուրէն դուրս ել-  
լալուն պէս թոթուրուող շան մը նման ,  
չուտով վրայէն նետեց այս անակըն-  
կալ սեղափոխութեան սպաւորու-  
թիւնը , եւ շուրջը նայեցաւ . անօթի  
մնալու վտանգը կար . առաջին ան-  
գամ ըլլալով գառնութիւնն ունեցաւ  
հասկնալու թէ Ս . Գիրքը եւ անոր

միջոցաւ իր յայտարարած խեղկատա-  
կութիւնները փոր չէին կշտացներ:  
Գաղթականութեան այդ ցնորեցուցիչ  
խառնաշփոթութեան մէջ զինքը մտիկ  
ընող պիտի գտնուէ՞ր: Ժողովարանի  
զանգին տեղ հիմակ յեղափոխութեան  
հսկայ իրոջնակը կը դողանջէր մեծաժը-  
խոր դանգիւնով: Բոլոր հոգեւոր բա-  
ներուն առժամեայ գազարին շրջանն  
էր: Հայերը, պահ մը երկինքէն ան-  
ջատուած, երկրային, մարմնական  
փրկութեան մեծ շունչովը կը հեւային:

Ղուկաս աղային համար, խեղդե-  
նալիք բան էր ասիկա: Եւ մանաւանդ  
խեղդեմալիք բանը սա էր որ ինք, ու-  
զած չուզած, կացութիւնը պիտի ըն-  
դունէր եւ ճշու հեղութեամբ ու ան-  
ըմբոստ համակերպութեամբ պիտի հե-  
տեւէր վազող հոսանքին, անոր տակ  
չխեղդուելու համար:

Վառնայի փողոցներուն մէջ, քաղ-  
թականներով ծանրաբեռն, Ղուկաս  
աղա վարանոտ քայլերով կը պարտէր,  
անճրկած, թեւերը երկու կողմէն կախ,  
ուռած քիթը հովին ու փոշիին տուած,  
երբեմն ակռաներուն մէջէն աստուա-  
ծաշունչի վկայութիւններ մըթմըթա-  
լով, ու երբեմն ալ անտանելի միջա-  
զէպերու հանդուրժելու սախպուած:  
Օրինակի համար, փողոցէ մը անցած  
առեւն քանի մը տաքզլուխ երիտա-  
սարդներ իրեն կը դիմեն յանկարծ  
ու կը հարցնեն.

— Ղուկաս աղա, դուն հին մարդ  
ես, եւ աւելի խելացի. մեր աղզին  
այս վիճակին մէջ յեղափոխութիւնը  
անհրաժեշտ չէ՞, ըսէ՞:

Ու Ղուկաս աղա, քիթը բերանը  
ծռռնկած.

— Յեղափոխութիւնը անհրաժեշտ  
է, աղաքս, ամա, Ս. Գիրքն ալ...  
Ու մարդուկը դեռ խօսքը չըմնցու-

ցած, ստահակները խոյս կուտան ա-  
հագին քրքիջներով:

— Անխճեալնե՛ր, կը միմոյ Ղու-  
կաս աղա, ճամբան շարունակելով  
զանդաղաքայլ:

Սակայն, քանի մը օր չանցած,  
անակնկալ գիւտ մը բաւական ամու-  
քեց խեղճ մարդուն դառն վիճակը:  
Դիպուածով իմացաւ թէ ժողովարան  
մը կար Վառնայի մէջ. ու անմիջա-  
պէս հոն վազեց, զէմքը ճառագայ-  
թարձակ: Թոքերուն բոլոր ուժովը  
լայն շունչ մը առաւ: Ազատուած էր:

Անմիջապէս իր անձը ծանօթա-  
ցուց պուլիար պատուելիին, որ առա-  
ջարկեց իրեն հայերէն աղօթք ար-  
տասանել մէկ քանի հայ եղբայրներու  
համար, որոնք ներկայ կը գտնուէին  
արարողութեանց:

Սեւ եւ թելմաշ բրտէնկոթին մէջ,  
զոր հետը բերած էր Պորէն, պատ-  
ուելիցուն, պիւրկ ու ծանրաշուք,  
աղօթեց, յափշտակուած ջերմեռան-  
դութեամբ մը, ամուլ անցուած օրե-  
րուն վրէժը լուծելու համար տարա-  
պայման երկարելով իր ապուշ յոր-  
դորականին անտանելի շարքը: Արա-  
րողութեան աւարտումէն յետոյ,  
Ղուկաս աղա դիտուն ժողվեց մէկ  
քանի խեղճ գաւառացիներ, որոնք  
զինքը մտիկ ըրած էին անտրտունջ  
համբերութեամբ, եւ կարգ մը խրատ-  
ներ տուաւ անոնց: մասնաւորապէս  
չեչտեց սա պատուէրին վրայ.

— Տղաքս, սա յեղափոխութիւն  
ըսուած բանը մեզի ամենեւին յարմար  
չէ. Ս. Գիրքը ծայրէ ծար կարգա-  
ցէք նայեցէք ատանկ բան մը կա՞յ...

Սակայն, շատ չանցած Ղուկաս  
աղա քշուեցաւ ժողովարանին բեմէն,  
նոր պատուելիի մը անակնկալ երեւ-  
մամբը: Նորեկը հին աղուէս մըն էր,

անեղուկ, կեղծապարիշտ եւ շահագործող: Ղուկաս աղա, մտքէն հայտնելով ու անիծելով հանդերձ, պատուելիին մօտեցաւ, քծնեցաւ, տափակցաւ, սողաց: Եւ այն պահուն որ կացութեան անձկութիւններովը կը տապկուէր իր նեղ հոգին, վրայ հասաւ Օր. Ֆրէյզլըրի: Այս անգամ վերջնական փրկութիւնն էր: Ղուկաս աղա, գաւառակցի իրաւունքով, տիրաբար մօտեցաւ գանատուհիին եւ իր ծառայութիւնը անոր դրամադրութեանը տակ դրաւ:

Եւ այդ վայրկիսէն գաղթականութեան մէջ պաշտօնապէս երեւցաւ Ղուկաս աղան, իբրև քննիչ:

Եւ Ղուկաս աղա, նեղ սրտի ու տափակ մտքի տէր մարդոց գոնիկութեամբը, գաղթականներուն վրայ իրեն ձեռքը անցած իշխանութիւնը տարապայման խոստութեամբ սկսաւ ի գործ դնել: Իր դիրքին զէմ եղած երեւակայական անիրաւութեան վրէժը կարծես պիտի լուծէր. եւ յետոյ խղճահար ու նախանձախնդիր պաշտօնեայ մը երեւնալու իր կեղծաւոր ու քծնող փութկտութեամբը կուզէր Օր. Ֆրէյզլըրի աչքը մտնել:

Ամէն առտու անիկա ճամբայ կ'ըլլար ձեռքը ցուցակ մը՝ գաղթական ընտանիքներու ընտանիքները նշանակող, ու տուն տուն կը պտըտէր՝ թափուած արցունքներու, արծակուած կոծերու, պաղատանքներու, սպառնալիքներու, անէծքներու, լուտանքներու հանդէպ անվրդով, փոքր կնակածի մը վրայ ամբողջ ընտանիքներ, իսկապէս թշուառ, զրկելով ամէն նըպատէ, միւս կողմէ, անորակելի ապուշութեամբ մը խաբուելով անարժան ու խարերայ գաղթականներէ, որոնք զանազան հնարքներով, ստոր

կեղծիքներով կը յաջողէին մեր պատանակ պատուելիին սնամասութիւնը շահագործել:

Շատ չանցած գաղթականութեան բոլոր խաւերէն գանդատներ եկան խոնուիլ Օր. Ֆրէյզլըրի սեղանին վրայ: Ղուկաս աղան ինքզինքը կարգարացներ այն գերազանց առարկութեամբ թէ ինք չէր ուզեր իսկական չքաւորին սահմանուած հացը տալ կեղծ աղքատներու, որոնք կուզէին խաբէութեամբ օգտուիլ կազմակերպուած նպատէն. եւ յետոյ, Ղուկաս աղան տեսակէտով, յայտնի էր որ տարբեր ընթացք մը արամագծապէս հակառակ պիտի ըլլար Ս. Գրքի երկնային արամադրութիւններուն:

Բաւական ժամանակ օրուն մարդը եղաւ ինք. «Կննիչ Ղուկաս» ը ամէնուն խօսքի նիւթ էր. անոր շահատակութիւնները բերնի ծամոց եղած էին:

Գաւառացի գաղթականներու մէջ, — որոնք սրտամտիկ թշուառութեամբ մը կը տառապէին մութ խրճիթներու, խոնաւ խոներու ու լքուած փրփրկած խանութներու անիկանը, ձիւնին ձրմբին խշտիկներու վրայ կ'ծկուած, — Ղուկաս աղա անօրինակ տեսարաններու ներկայացման առիթ կուտար: Այդ շրջանակին մէջ, հրեշտակ յարմար ու արգանանդ գետին մը գտած էր. անոնք հաց կուզէին, Ղուկաս աղա խրատ ու հոգեւոր յորդորներ կուտար անոնց: Իրեն համար մասնաւոր նպատակ ընտրած էր ծխելու սովորութիւնը բառնալ այդ խեղճերուն մէջէն. ամէն իրիկուն հիւանդանոց վերադարձին, անիկա քանի մը ծխատուփ կը ներկայացնէր Օր. Ֆրէյզլըրի տեսակ մը խրոխտանքով, թէեւ ինք,

դեռ քանի մը ամիս առաջ, մոլեգին ծխող մըն էր, եւ ըսողներ կային թէ անիկա գիշերը, իր տան մէջ, գաղտնապէս կը ծխէր:

Ազնիւ գանատուհին, իր ազնուական ժպիտովը որուն տակ կզգացուէր ներողամիտ բարեացակամութիւն մը կեղծաւոր բողոքականին տխմար հրեարամտութեանցը համար, ստիպուած էր տեսակ մը վստահութիւն ցուցնել այդ մարդուն, ջանալով հանդերձ՝ ուրիշ պաշտօնեաներու ձեռքով՝ դարմանել անար կասկածելի գործունէութեան փաստները:

Սակայն մեր վէպը սկսած վայրկեանին, Ղուկաս ազաին դէմ կատաղութիւնն ու գայրոյթը այն աստիճան սաստկացած էին գաղթականութեան մէջ որ, ինչպէս տեսանք, հիւանդանոցին մէջ իսկ, մոլեգին կիներու խմբակ մը գործնական կսկծալի դաս մը պիտի տար ժողովարաններ ու այդ միջրոպին:

Եւ անիկա, որ մինչեւ այդ վայրկեանը արհամարհոտ անտարբերութեամբ մը դիտած էր իր դէմ եռացած եւ խմորուած համայնական անգայրոյթը, վտանգը այդքան մօտէն ու շօշափելի կերպով զգալով՝ ցնցուեցաւ, ու տեսանք թէ ի՛նչ արհաւրոտ պաղատանքով մը ապաւինեցաւ Գառնիկի նպատակաւոր պաշտպանութեանը, առաջքը տանելու համար զղրգալի գայթակղութեան մը:

Յուանց Մուսիֆօստուկեան

(Տարւն-էէ)



## ՄԵՐ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐՈՒՆ

Շաւիղ իններորդ ամիսը կը թեւակոխէ, ու դեռ բաժանորդներուն մեծագոյն մասը չեն վճարած իրենց պարտքը: Խմբագրութիւնս թերթին առաջին քանի մը թիւերուն մէջ յայտարարած էր թէ անոնք որ առաջին երեք թիւերը ընդունելէ յետոյ ետ չեն դարձներ, բաժանորդ կը նկատուին. հետեւապէս անոնք որ ութը ամիսէ ի վեր Շաւիղ կ'ստանան ու կը կտրգան՝ պարտաւոր են վճարել տարեկան բաժնեգինը:

Ու է թերթի իրաւունքն է պահանջել կտրգացուած թերթին բաժնեգինը, իսկ բարոյականի աէր ու է մարդու տարրական պարտականութիւնն է վճարել իր կտրգացած թերթին փոխարժէքը: Երբոր այս պարտականութիւնը կանտեսուի, թերթ մը լիով լի ազատութիւն կը վայելէ իր ուղած կերպովը վարուելու իր պարտազանց բաժանորդներուն հանդէպ:

Ուստի խմբագրութիւնս կ'սպասէ որ բաժնեգինները անշարժ վճարուին:

Отговорникъ В. Димитровъ

Печатающая «Ориенталъ» — Варна.

«ՇԱԻԻՂ» ԻՆ 1900րդ ԹԻԻԸ ՔԻՁ ՕՐԷՆ ՀՐԱՊԱՐԱՎ ՊԻՏԻ ԵՂԼԱՅ

---

ԱՌԻԹԷՆ ՕԳՏՈՒԵՑԷՔ

---

# ՊԱՏՈՒՅԱՆԻՆ ՄՈՒՐՅԱԿԸ

ԹԱՏՐԵՐԳՈՒԹԻՒՆ ԵՕԹԸ ԱՐԱՐՈՒԱԾ

ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆ

ՏԻԳՐԱՆ ՄԱՆԱՎԵԱՆԻ

---

Սոյն գիրքը ուր 120 էջերէ կը բաղկանայ և մաքուր տպագրութեամբ, փոխանակ 1 ֆրանքի

50 սանթիմի կը ծախուի,

գիմել «Արևելեան» տպարան Օննիկ Բարսեղեանի, Վառնա:

Փոսթի ծախքը՝ 10 սանթիմ՝ գնողներու վրայ է. դրամի փոխարէն նամակադրոջմ կ'ընդունուի:

# ՏՊԱՐԱՆ ԱՐԵՒԵԼԵԱՆ

Օ. ԲԱՐՍԵՂԵԱՆԻ

Պ. Ա. Ռ. Ն. Ա.

Երկրորդ թաղ, Շիրյէնսֆա փողոց, (Մագաղղբ յեշմէի կից)

Կը ապագրուին հայերէն, պուլխարերէն, գաղղիերէն, յունարէն, սաճկերէն և այլ լեզուներով այցեառութեան, հասցեատու, հարսանեկան հրատարակիչ, ազգարարութիւն, համակազմութիւն, պահարան, մահազգ, վաճառականական ամեն տեսակ գործեր, գիրք, լրագիր, և այլն:

Գունաւոր և սևեղօծ գարդագործերու համար ամէն լեզուէ ճոխ ստուեր և մասնաւոր գործիքներ կը գտնուին:

ՄԵԾ ԽՆԱՄՔ ԵՒ ՄԱՔՐՈՒԹԻԻՆ

ԳԻՆԵՐԸ ՅՈՅԹ ԳԻՒՐԱՄԱՏՅԵԼԻ

Ուրիշ քաղաքներէ եկած յանձնարարութիւններ հետաքրքրեալ և փութով կը կատարուին:

**IMPRIMERIE ORIENTALE**

ONNIK PARSEGHIAN

11 Ouchtast, rue Chiptchenska, VARNA (Bulgarie).